ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 27.11.2019թ.
Ժամը 14:20

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖԿԾ պետ Ա.Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա.Սաֆարյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ռ.Զաթոյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը,

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **12.11.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն **1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, բացառությամբ **«Օստինատո» ՍՊԸ**-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 16991 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն՝ ինչը գերազանցում է **«Օստինատո» ՍՊԸ**-ի կողմից սույն ընթացակարգի **5, 6, 7, 16, 21, 35, 46, 48, 51, 52, 59, 63**-րդ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի քննարկվել (գնահատվել):

08.11.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը՝ բացառությամբ **«Օստինատո» ՍՊԸ**-ի:

«Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում /Հավելված 3.1/ 26-րդ չափաբաժնի մասով, էլեկտրոդ 3մմ՝ 5կգ փաթեթավորմամբ, ապրանքի փոխարեն առաջարկում է 3.35կգ փաթեթավորմամբ, իսկ 55-րդ չափաբաժնի մասով՝ մետաղապլաստե խողովակ D15/պայմանական տրամագիծը՝ 15մմ, արտաքին տրամագիծը՝ 16մմ, համաձայն ГОСТ 53630/ առաջարկում է խողովակ՝ 16մմ արտաքին տրամագծով:

Համաձայն հայտը նախագծող անձի կողմից **20.11.2019թ.**-ին ստացված մասնագիտական եզրակացության, 26-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից առաջարկվող 3.35կգ փաթեթավորումը չի ազդում ապրանքի որակական հատկանիշների վրա, իսկ 55-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքը համապատասխանում է ГОСТ 53630-ի պահանջներին, ուստի ներկայացված ապրանքների որակական չափանիշները համապատասխանում են պահանջված տեխնիկական բնութագրերին:

Ընթացակարգի 36-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում հրավերով սահմանվել է. «Ներսի հարդարման աշխատանքների համար, գիպսե հիմքով, 30 ±1կգ-ոց պարկերով, պարկերի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ», սակայն **«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ**-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի /Հավելված 3.1/ տեխնիկական բնութագրում չի նշվել. «Ներսի հարդարման աշխատանքների համար, գիպսե հիմքով, պարկերի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ»:

Ընթացակարգի 37-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում հրավերով սահմանվել է. «Դրսի հարդարման աշխատանքների համար, 20 ±1կգ-ոց պարկերով, հիմքը՝ ցեմենտային, պարկերի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ», սակայն **«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ**-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի /Հավելված 3.1/ տեխնիկական բնութագրում չի նշվել. «Դրսի հարդարման աշխատանքների համար, հիմքը՝ ցեմենտային, պարկերի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ»:

20.11.2019թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցրել է նիստը և գնումների համակարգողը ծանուցեց **«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ին և «Օստինատո» ՍՊԸ-ին 3 աշխատանքային օրվա ընթացքում, /21.11.2019թ.-25.11.2019թ./** շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված ժամկետում ուղարկել են պահանջվող փաստաթղթերը:

«Օստինատո» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՀ ՊԵԿ-ից տրամադրված տեղեկանք, այն մասին որ **20.11.2019թ.**-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով հարկային պարտավորություն չունի:

Հիմք ընդունելով վերոնշյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պայմանների բավարարելու վերաբերյալ ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 **27.11.2019թ.** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման չափորոշիչները գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/4»** ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներին հայտարարել հաղթող /ընտրված/ մասնակից՝ այն չափաբաժիններում, որտեղ ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող:

Գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/4»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Ա. Մուրադյան

Գնահատող _____ Ա. Պապյան

Գնահատող _____ Ա.Սաֆարյան

Գնահատող _____ Ռ. Չաթոյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան